1894 թ. տեղի ունեցաւ Սասունի կոտորածը, որ հաղարաւոր զոհեր խլեց հայ ժողովրդից։ 1908—9թ. բռնկուեց տաճկական յեղափոխութիւնը, կարծելով թէ փոփոխութեան պիտի ենթարկուի նաև պետական կարգն ու քաղաքականութիւնը, հայ ղեկավարները համաձայնութեան եկան երիտասարդ թիւրքերի հետ միասին կուռելու բռնապետութեան դէմ. դժբախտաբար, նրանց յոյսերը այս անգամ ևս չարդարացան, և իբրև պատասխան այդ համաձայնութեան, տեղի ունեցաւ Ադանայի և Կիլիկիայի մեծ ջարդը 1909թ.։ Տաճիկները անշեղ կերպով տանում էին իրենց գիծը, իսկ եւրոպական պետութիւնները նոտաներից այն կողմը չէին անցնում։ Դրութիւնը մնում էր նոյնը և հայ դատը դրադրութեանց մի անսպառ նիւթ էր միայն, երբ 1913թ. Պոլսում մշակուեց նոր ռեֆորմների նախագիծը. սակայն, 1914 թ. աշնանը բռնկուեց համաշխարհային պատերազմը, և դրանով վերջացաւ հայ դատի դիւանագիտական շրջանը։ Այնուհետև հայ ժողովուրդը հանդէս եկաւ անկախ կազմակերպութեամբ՝ նախ ազգային խորհուրդների և ապա պետութեան ձևով ու այժմ նրա մի մասը ճանաչուած է Դերագոյն Խորհրդի կողմից, ասել է նա արդէն ուրոյն պետական կազմակերպութիւն է միջազգային կշիռ և արժէք ունեցող։

Դիւանագիտական աշխատանքներին զուգահեռ ընթացել է և ժողովրդական ինքնագործունէութիւնը՝ հայ յեղափոխական շարժումը. այդ շարժման ղեկավարն ու իդէալների մարմնացումն է եղել Հ.Յ.Դաշնակցութիւնը, որ երեսուն տարիներից ի վեր պայքարել, կուռել, մեռել ու ապրել է այդ դաղափարով ու նրա համար։ Նրա պատմութիւնը ամենահերոսական ընդվզումների ու պայքարների դրուագներից է կազմուած. իր կազմակերպած հայդուկային խմբերով Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը անվերջ կռիւ է մղել տաճիկ բռնապետութեան դէմ և նրա աշխատանքը եղել է յոգուտ ոչ միայն հայ, այլ և տաճիկ ժողովրդի։ Այդ շարժման մէջ իրենց տեղն ունէին հնչակեանները և ուրիշ շատ շատերը՝ անթիւ, անհամար ու անյայտ զոհեր, որոնք լուռ մարտնչել են հայ ժողովրդի ազատագրութեան համար։ Դժուար է երևակայել այն մեծ զոհաբերութիւնը, որ տուել է հայը — պատմութեան մէջ դժուար է գտնել մի ժողովուրդ, որ միայն պատերազմի ընթացքում կորցրած լինի իր մի քառորդ մասը ու նաև դժուար է գտնել այնպիսին, որ այդ բոլոր դժբախտութիւններից յետոյ դեռ ոյժ և մղումն ունենայ պայքարելու և ապրելու։ 1914 թ. հայ ժողովուրդը ամենայն ոգևորութեամբ պատերազմի դաշտ նետուեց ու կրկին տուեց բազմաթիւ զոհեր իր արդար դատի սեղանի վրա. մէկ ու կէս միլիոնից աւելի զոհ է տուել հայը իր պայքարների ընթացքում։ Բայց անսահման է նրա կենսունակութիւնը, բոլոր արհաւիրքներին դիմադրեց ու չմեռաւ նա, այլ յաղթեց. այդ յաղթանակի տօնն է այսօր։

Այսօր հայ ազատագրական շարժումը մտնում է իր երրորդ՝ պետական կազմակերպութեան շրջանը. Հայաստանը ճանաչուում է անկախ պետական օրգանիզմ, սակայն, ոչ իր իսկական սահմաններով։ Դրա համար մենք դեռ ունենք անդուլ աշխատանք և ուժեղ կռիւ, որ պիտի տարուի ամենայն եռանդով։ Այժմ, այս յաղթանակի օրը, արժէ, որ մենք յիշենք մեր մօտիկ անցեալը։ Պատերազմի դուրս եկաւ հայը իբրև մի ոսմանտիկ ժողովուրդ. հայ գիւղացին, հայ գինուորը ժպիտ չունի երեսին, կուռել ու մեռել է նա թախիծը դէմքին, բայց նրա մէջ անմեռ ու հաստատուն մնացել է ու կայ հաւատը. դա է մեր ժողովրդի ոսմանտիզմը, որ տուել է անձնազոհութեան փայլուն օրինակներ։ Ինչի՞ն ենք պարտական այս անկախութիւնը ստանալու համար։ Եւրոպական պետութեանց շահերի հետ մէկտեղ իր դերագոյն տա-